«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Խոսքային հաղորդակցում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Քրիստինե Եղիազարյան

Ուսումնական հաստատություն՝ Կարմրաշենի Ա.Ասլանյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- **3**

Խոսքային հաղորդակցում---------- 4

Եզրակացություն---------- **19**

Օգտագործված գրականության ցանկ---------- **20**

Ներածություն

Թեմայի նորույթը: Հաղորդակցությունը կապ է, որի միջոցով իրականանում է տեղեկատվության փոխանակում կենդանի և անկենդան բնության համակարգերի միջև: Տրանսպորտային հաղորդակցությունը, հեռագրային կապը, հավատքի աղոթքները, երգերը, ողջույնները, ժպիտը, գրքեր-թերթեր կարդալը, կրթական դասախոսությունները, հանրային ներկայացումները, ֆիլմերի դիտումը, սեր բացատրելը, բջջային հեռախոսով զրուցելը, գովազդային հոլովակի նկարահանումը և տարածումը, վեճերը և հաշտությունները, պետությունների առաջնորդների բանակցությունները, էլեկտրոնային փոստը, սոցիալական միֆերի ստեղծումը, քաղաքական գործչի և պետության իմիջի ձևավորումը սրանք բոլորը հաղորդակցության գործընթացի օրինակներ են:

Թեմայի նպատակը: Ուսումնասիրել խոսքային հաղորդակցման առանձնահատկությունները:

Հաղորդակցումը հասարակական սուբյեկտների (անձ, սոցիալական խումբ) փոխներգործության գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակություն: Որպես հաղորդակցման սուբյեկտ հանդես են գալիս ինչպես անհատներ, այնպես էլ խմբեր:

Հաղորդակցությունը վերահսկում է հասարակական կյանքի բոլոր կողմերը, մարդկանց, սոցիալական խմբերին: Մարդը ապրում է ինֆորմացիոն դարաշրջանում՝ հաղորդակցության տարածման մեջ, որը կազմված է տարբեր պատկերներից, իմիջից, հաղորդագրություններից, սիմվոլներից, միֆերից, կարծրատիպերից: Նույնիսկ առաջացել է <<տեղեկացված մարդ>> տերմինը. նրա համար հմտություն է ստանալ, մշակել և փոխանցել տեղեկատվությունը:

Խոսքային հաղորդակցում

Խոսքային հաղորդակցությունը կայանում է ոչ միայն մարդկանց միջև տեղեկատվության փոխանցմամբ, այլ նաև անձի ինքնորոշմամբ: Հաղորդակցությունը և՛ հաղորդագրության

ուղի է, և՛ կապի տեսակ է, և՛ հաղորդագրության գործողություն է, ինչպես նաև տեղեկատվության հաղորդումն է տեխնիկական միջոցների օգնությամբ։ Հաղորդակցությունը և երկխոսությունը մարդկանց համար հանդիսանում են ներկայանալու միջոցներ, իսկ երկխոսության էությունը կայանում է մարդկանց միջև խոսակցությունները։ Հաղորդակցությունը հաղորդագրության ուղին է, շփման գործընթացն է, տեղեկատվության հաղորդումն է, որն իրականացվում է տեխնիկական միջոցների օգնությամբ։

Ներկա ժամանակներում հաղորդակցություն տերմինը մեկնաբանվում է հետևյալ կերպ.

- կապի միջոց,
- շփում, տեղեկատվության փոխանցում մեկ անձից մյուսին (միջանձնային հաղորդակցություն),
- զանգվածային հաղորդակցություն,
- Տեղեկատվության փոխանցում հասարակության մեջ։

Ֆ. Ի. Շարկովի կարծիքով առաջին մոտեցումը ուղղված է հաղորդակցության միջոցների ուսումնասիրման վրա։ Երկրորդը միջանձնային հաղորդակցությունն է։ Երրորդը զանգվածային հաղորդակցության գործողության խնդիրն է, որն ուղղված է հասարակական հարաբերությունների զարգացմանը։ Լայն իմաստով նա դիտարկում է հասարակության ներսում հաղորդակցության գործընթացի պայմանները, որը թույլ է տալիս ստեղծել, փոխանցել և ընդունել բազմազան տեղեկատվություն։ [1]

Առաջին անգամ գիտական անդրադարձ հաղորդակցություն, <<communication>> (և զանգվածային հաղորդակցություն, <<masscommunication>>) հասկացությանը կատարել է ամերիկացի սոցիոլոգ Չարլզ Հորտոն Քուլին՝ XX դարի 20-ական թթ., որից հետո սկսվեց ինտենսիվ գործընթաց՝ ուղղված հաղորդակցության էության, ձևերի, տեսակների գործընթացի ուսումնասիրմանն ու բացահայտմանը։ Քուլին նկարագրում էր հաղորդակցությունը, որպես <<մեխանիզմ, որի միջոցով ապահովվում է մարդկային հարաբերությունների էությունն ու զարգացումը>>։ Այդ մեխանիզմը իր մեջ ներառում է նաև սիմվոլներ և այն կապի միջոցները, որոնց օգնությամբ տեղեկատվությունը տարածվում է։ Հաղորդակցությունը լայն իմաստով ներառում է իր մեջ դեմքի արտահայտություն, դիրքեր և ժեստեր, ձայնի տոնը, բառերը, գրավոր փաստաթղթերը, տրանսպորտային միջոցները,

[11] Ալեքսանյան Ա. Ս. «Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում» Երևան 2015

հեռագիրը, հեռախոսը և այլն։ Ըստ Ն. Լումանի հաղորդակցությունը տեղի է ունենում երեք տարբեր ընտրությունների սինթեզից, մասնավորապես տեղեկատվության ընտրություն, այդ տեղեկատվության հաղորդագրության ընտրություն և հասկացվածություն կամ չհասկացվածություն հաղորդագրությանը և նրա տեղեկատվությանը։ Այս 3 բաղադրիչներից որևէ մեկը չի կարող առանձին գոյություն ունենալ։ Միայն միասին են նրանք իրականացնում հաղորդակցությունը։ Հաղորդակցության կարևոր 3 կոմպետենտներից են՝ տեղեկատվությունը, հաղորդագրությունը և ընկալումը։

Հաղորդակցական ունակությունը կամ հաղորդունակությունը անձի այն հատկությունն է, որով նա բնականոն փոխհարաբերություններ է հաստատում ուրիշների հետ, համարժեքորեն ձևակերպում է իր ասելիքը, տեղեկություններ հաղորդում և ընդունում՝ ճշտորեն վերծանելով դրանք, ապահովելով պատշաճ հետադարձ կապը։ Հաղորդակցումը հասարակական սուբյեկտների /անձ, սոցիալական խումբ/ փոխներգործության գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակություն։ Որպես հաղորդակցման սուբյեկտ հանդես են գալիս ինչպես անհատներ այնպես էլ խմբեր։ Պրագմատիկ Ռոկֆելերը, որը շատ լավ էր հասկանում հաղորդակցման նշանակությունը, ասում էր. «Մարդկանց հետ հաղորդակցման ունակությունը նույնպիսի ապրանք է, ինչպիսին շաքարն է և սուրճը։ Ես պատրաստ եմ այդ ունակության համար վճարել ավելի քան այս աշխարհի որևէ այլ ապրանքի համար»: Իսկ ի՞նչ է նշանակում կարողանալ հաղորդակցվել։ Դա նշանակում է կարողանալ ճանաչել մարդկանց, գնահատել նրանց գործնական հնարավորությունները և դրա հիման վրա օգտագործելով հաղորդակցման հոգեբանական ունակությունները, նրանց հետ փոխհարաբերություններ կառուցել։ Հաղորդակցման ընթացքում մարդիկ տեղեկություններ են փոխանակում, ընկալում են միմյանց, փոխազդում։ Ըստ այդմ էլ պայմանականորեն տարբերակվում են հաղորդակցման հետևյալ կողմերը.

Տեղեկատվական կողմ - ենթադրում է որոշակի տեղեկությունների փոխանակում և բնութագրվում է հոգեբանական կապ հաստատելու ունակությամբ, հաղորդակցման խոսքային և ոչ խոսքային միջոցների արդյունավետ օգտագործմամբ։

Փոխազդեցության կողմ - ենթադրում է փոխազդեցությունը մարդկանց միջև և բնութագրվում է հաղորդակցության մեջ <<դերերի>> բաշխմամբ, հոգեբանական ներգործության միջոցների կիրառումով:

Ընկալման կողմ - ենթադրում է հաղորդակցության գործընթացում մարդկանց փոխադարձ ընկալումը և ճանաչումը, ինքնաճանաչումը, հաղորդակցման մյուս մասնակցի վարքի կանխագուշակումը: Անձի հաղորդացական իրազեկության (հաղորդունակության) հիմնական բաղադրիչներն են հանդիսանում անձի դիտողունակությունը, ինքնադրսևորումը, վարվեցողությունը, անձի խառնվածքը և հաղորդակցական յուրահատկությունները, միջանձնային ընկալման հիմնական սխալները, հաղթահարման ուղիները, գործարար վարվելակերպը որպես կառավարման կուլտուրայի բաղադրիչ, ունկնդրման մակարդակները և կառավարչի հաղորդունակության զարգացման ուղիները: Անձի խառնվածքը (սանգվինիկ, խոլերիկ, ֆլեգմատիկ և մելանխոլիկ) իր ազդեցությունն է թողնում մարդկանց փոխադարձ ընկալման, փոխազդեցության և տեղեկատվության վրա: Հարկավոր է իմանալ անձի խառնվածքի դերը նրա դրական ու բացասական գծերի, գործարար հատկանիշների, խոսքի ոճի, ընկալման առանձնահատկությունների վրա և այլն:

տարբերություն լեզվի, որը խոսողական ունակությունների ընդհանրական համակարգ է տվյալ լեզվով խոսող հանրության յուրաքանչյուր անդամի գիտակցության մեջ, խոսքը այդ համակարգի կոնկրետ, անհատական իրացումն է, լեզվի կենդանի գոյը, որ դրսևորվում է խոսքային գործունեության միջոցով, խոսքային ակտերով: Խոսքը կառուցվում է լեզվական համակարգի թելադրանքով. այն լեզվի հետ միասնության մեջ է: Խոսքը բնորոշ է նրանով, որ այն նյութական կողմ ունի, ընկալելի է զգայարաններով (լսողությամբ, տեսողությամբ, շոշափելիքով), իրականության հետ համապատասխանության տեսանկյունից կարող է լինել ճիշտ կամ սխալ, կեղծ: Այն անկրկնելի է, իրացվում է կապված հաղորդման որոշակի նպատակների հետ, հարմարեցվում է իրադրության հետ (խոսքային իրադրություն, ծավալվում է ժամանակի ու տարածության մեջ (խոսքային շղթա, դինամիկ է. արտադրողականությամբ սահմանափակ չէ, իրացվում է որոշակի անհատի կողմից, պայմանավորված է անհատի ստեղծագործական ակտիվությամբ և նպատակադրումներով:

Խոսքի արտաբերումը, հաղորդումն ու ընկալումը իրացվում են խոսքային գործարաններով, որոնց այս կամ այն վթարի հետ կապված՝ գոյանում են խոսքային խանգարումներ։

Խոսքային ապարատը մարդու օրգանիզմի այն օրգանների ամբողջությունն է, որոնց աշխատանքով իրացվում է խոսքը, խոսքի կազմավորումը, արտաբերումը, հաղորդումը և ընկալումը:

Խոսքը ներկայանում է երեք խմբով՝ ղեկավարող, ընկալող և կատարող։ Ղեկավարող գործարանը ուղեղն է՝ համապատասխան խոսքային կենտրոններով և նյարդային ցանցով։ Ընկալող գործարանը լսողական ապարատն է՝ ականջը։ Գրավոր խոսքն ընկալվում է նաև տեսողությամբ, որոշ դեպքերում՝ շոշափելիքով։ Կատարող գործարանը արտասանական ապարատն է։

Հնչարտաբերությունը որոշակիորեն կապված է նաև խոսքային շնչառության հետ։ Հնչարտաբերության կարևորագույն օրգան են ձայնալարերը։ Խոսքային շնչառությունը, ի տարբերություն կենսաբանական շնչառության, կատարվում է հիմնականում բերանային խոռոչով։ Բերանի խոռոչում են գտնվում կարևորագույն արտասանական օրգանները՝ լեզուն, ատամնաշարը, քիմքը, լեզվակը։ Արտասանական գործընթացում չափազանց կարևոր է նաև շրթունքների դերը։ Արտասանական օրգանները բաժանվում են ակտիվ և պասիվ խմբերի։ Ակտիվ կոչվում են այն օրգանները, որոնք շարժուն են և էական դեր են խաղում հնչարտաբերության մեջ, օրինակ՝ լեզուն, շրթունքները, ձայնալարերը, փափուկ քիմքը։ Պասիվ կոչվում են այն օրգանները, որոնք անշարժ են և պակաս դեր ունեն հնչարտաբերության մեջ, օրինակ՝ ատամնաշարը, կոշտ քիմքը և այլն։

Տեղեկատվության փոխանակման համար օգտագործվում են սիմվոլներ, որոնց առնչվում են բառերը, ժեստերը, ինտոնացիան, տոնայնությունը։ Ուղարկողը կոդավորում է հաղորդագրությունը վերբալ և ոչ վերբալ սիմվոլների օգնությամբ։ Միջանձնային հաղորդակցությունն անհրաժեշտ է դիտարկել ավելի լայն համատեքստում, քան զուտ

տեղեկատվությունը՝ որպես կազմակերպության ներսում մարդկանց միջև ամբողջական հաղորդակցման անքակտելի մաս։[2]

Գրականության մեջ միջանձնային հաղորդակցությունը ներկայացվում է երեք գործառույթների ամբողջության ձևով.

- Փոխադարձ ընկալման և ըմբռնման (պերցեպտիվ) գործառույթ։ Հաղորդակցման ընթացքում և դրա միջոցով մարդիկ ընկալում են միմյանց, իրար մասին ձևավորում են կայուն պատկերացումներ, վարքի գնահատման չափանիշներև այդ ամենի հիման վրա նրանց միջև հաստատվում է փոխըմբռնման կայուն մակարդակ։
- Փոխազդեցության (ինտերակտիվ) գործառույթ։ Հաղորդակցման ընթացքում և դրա միջոցով մարդիկ ազդում են միմյանց վրա, հնարավորություն են ստանում համատեղելու իրենց ջանքերը, գումարելու իրենց փորձն ու հմտությունները, ուղղորդելու դրանք որոշակի նպատակների կենսագործմանը, իրենց միասնական գործունեությունը։
- Տեղեկատվական (կոմունիկացիոն) գործառույթ։ Մարդիկ, անմիջականորեն կամ միջնորդավորված հաղորդակցման ընթացքում, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, բնական խոսքի և արտալեզվային միջոցներով, բանավոր կամ գրավոր, միմյանց զանազան կարգի ու բնույթի տեղեկություններ են հաղորդում և ստանում, ինչպես նաև իմաստավորում դրանք, ճշգրտում, վերծանում, կուտակում, ձևափոխում, զարգացնում և այլն։[3]

Մարդկային հաղորդակցման այս երեք կողմերը կամ գործառույթները լոկ պայմանականորեն կարելի է տարանջատել, ընդ որում, այս միասնականությունը դրսևորվում է դրանց թե՛ գոյության, և թե՛ գործածության մեջ, քանի որ ամեն մեկը նպաստում է մյուսի արդյունավետությանը։ Այսպես, դիմացինի մասին ճիշտ պատկերացում կազմելու, համարժեք ընկալելու համար մենք կարիք ունենք բավարար տեղեկույթի։ Ուստի լիարժեք տեղեկատվությունն անհրաժեշտ պայման է միջանձնային պերցեպցիայի փոխադարձ ընկալումն ու փոխըմբռնուն ապահովելու համար։ Իսկ որքան լավ ենք մենք

[2] Ալեքսանյան Ա. Ս. «Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում» Երևան 2015
[3] ԽուդոյանՍ. Ս. <<Անձիզար գացման ճգնաժամային տարիքները>>-Երևան 2004

ճանաչում նրան, ում տեղեկություն ենք հաղորդում (որքան ավելի լավ գիտենք տեղեկությունն ընկալողի կարգավիճակը, շահերը, հետաքրքրությունները, դիրքորոշումը, նպատակները, ակնկալիքները, տվյալ տեղեկության հանդեպ հնարավոր վերաբերմունքը և այլն), այնքան տեղեկությունն ավելի նպատակային է, միջանձնային կոմունիկացիան՝ ավելի արդյունավետ: Նույն կերպ՝ որքան ավելի հավաստի է ընկալվում ստացված տեղեկությունը, այնքան ավելի վստահելի է համարվում տեղեկույթի աղբյուրը, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ տեղեկատվությունն ուղարկողը (կոմունիկատորը) և ստացողը (ռեցիպիենտը) կարող են համագործակցել, արդյունավետորեն փոխազդել ընդհանուր գործունեության շրջանակներում: Միջանձնային կոմունիկացիան այնքան ավելի արդյունավետ է, որքան ավելի սերտորեն են հաղորդակցվողները ներգրավված համատեղ գործունեության մեջ:

Միջանձային հաղորդակցման և, ընդհանուր առմամբ, մարդկային հաղորդակցության արդյունավետության կարևոր պայմաններից մեկը անձի, այսպես կոչված ՝հաղորդունակությունն՝ է, այսինքն՝ այն կարողությունը, որով մարդը բնականոն փոխհարաբերություններ է հաստատում ուրիշների հետ, համարժեքորեն ձևակերպում է իր ասելիքը, տեղեկություններ է հաղորդում և ստանում՝ ճշտորեն վերծանելով դրանք, զանազանելով գլխավորն ու երկրորդականը, ապահովելով պատշաճ ուղիղ և հետադարձ կապը:[4]

Հաղորդունակությունը հույժ անհրաժեշտ կարողություն է ղեկավարի համար, քանի որ նրա առօրյա գործունեության անբաժանելի մասն է կազմում մարդկանց՝ ենթակաների, գործընկերների, վերադասների հետ հաղորդակցությունը: Հաղորդակցման դասակարգումները շատ տարբեր են, ինչը պայմանավորված է դրա գործառույթների և ձևերի բազմազանությամբ: Ըստ սուբյեկտների ընդգրկման ծավալի՝ հաղորդակցումը դասակարգվում է.

- միջանձնայինի. երկու անձանց միջև դեմ առ դեմ իրականացվող հաղորդակցում
- խմբայինի. երեք անձից մինչև 20-30 անձանց միջև հաղորդակցում
- զանգվածայինի. այս դեպքում ընդգրկված են մարդկանց մեծաթիվ խմբեր:

[4] Թունյան Զ. Ե. Երիցյան Լ. Մ. <<Կրտսեր դպրոցականի հոգեբանություն>>, Երևան 2010

Թվում է շատ պարզ է ասել այն, ինչ մտածում ես։ Բայց շատ հաճախ, երբ ցանկանում ենք մեր խոսքը փոխանցել զրուցակցին, ապա այն կարող է կորուստներ կրել վերարտադրելիս, չնայած մեր լավագույն մտադրություններին։ Մենք մի բան ենք ասում, զրուցակիցը մեկ այլ բան է հասկանում արդյունքում առաջանում է անհամաձայնություն, ինչն էլ իր հերթին ստեղծում է կոնֆլիկտ։ Բարեբախտաբար, կան մի շարք մեթոդներ, ուղղություններ, որոնք օգնում են ավելի արդյունավետ հաղորդակցվել։ Երբ հաղորդակցվում ենք կողակցի, երեխայի, տնօրենի կամ կոլեգաների հետ, կարող ենք բարելավվել հաղորդակցային հմտությունները, որոնք հնարավորություն կընձեռեն կառուցել վստակության և հարգանքի մթնոլորտ, թույլ կտան զգալ լսված ու հասկացված։ Հաղորդակցությունն ավելին է քան միայն տեղեկատվության փոխանակումը։ Դա զգացմունքների ու մտադրությունների ընկալումն է, որը ընկած է հաքղորդակցությունների հիմքում։ Արդյունավետ հաղորդակցումը նաև երկկողմանի ճանապարհ է։ Դա միայն այն չէ, թե ինչպես պետք է փոխանցվի հաղորդագրությունը, ինչպես պետք է ստացվի և հասկացվի մեկ ուրիշի կողմից, այնպես ինչպես մենք ենք մտադրված, այլ նաև լսել և հասկանալ խոսքի ամբողջ մտադրությունը, ինչ, որ ասվում է և դիմացինին ևս դարձնել լսված և հասկացված։ Հաղորդակցությունը ավելին է, քան պարզապես բառերը, որոնք օգտագործվում են։ Արդյունավետ հաղորդակցությունը միավորում է հմտությունների մի շարք՝ ներառյալ ոչ խոսքային վերբալ հաղորդակցությունը, լսելու կարողությունը, կառավարել պահի լարվածությունը, ունենալ ունակություն պաշտպանված հաղորդակցման համար և ընդունակություն ճանաչել ու հասկանալ քո սեփական զգացմունքները և այն մարդու, ու հետ շփվում ես։ Արդյունավետ հաղորդակցությունը այն սոսինձն է, որ օգնում է խորացնել քո շփումները մյուսների հետ, բարելավվել թիմային աշխատանքը,որոշումների ընդունումը և խնդրի լուծումը։ Այն հնարավորություն է տալիս նույնիսկ շփվել բացասական իրավիճակներում՝ պահպանելով հարգանիքի ու վստահության մթնոլորտը[4]։ Քանի որ արդյունավետ հաղորդակցությունը հանդիսանում է հմտություն, ավելի արդյունավետ է, երբ այն ինքնաբուխ է, բնական, քան ձևական ու կեղծ։ Ելույթը ընթերցելիս ավելի հաճախ չի ունենում այն ազդեցություն մարդկանց վրա, քան այն դեպքում երբ ներկայացվում է բանավոր։ Անշուշտ, ժամանակ և ջանքեր են պահանջվում այս հմտությունները զարգացնելու և արդյունավետ հաղորդակցվող դառնալու համար։

Բանավոր խոսքային հաղորդակցությունը բնութագրվում է հաղորդագրության փոխանցման համար բարձրաձայն բառերի, հնչյունների և արտահայտությունների օգտագործմամբ: Դա հաղորդակցության հիմնական ձևերից մեկն է. Բայց հակառակ մեզանից շատերի կարծիքի, փորձագետները կարծում են, որ մեր հաղորդակցության միայն 15% -ն է պատկանում այս կատեգորիային:

Օրինակ ՝ երբ մենք խոսում ենք մեկ այլ անձի հետ, մեր օգտագործած բառերը կլինեն բանավոր բանավոր հաղորդակցության մի մաս: Այնուամենայնիվ, իրավիճակի մյուս բոլոր տարրերը (ինչպիսին է մեր կեցվածքը կամ ձայնի տոնը) կընկնեն այլ կատեգորիաների:

Մեր ժամանակներում մեծ ուշադրության է արժանանում կրտսեր դպրոցական տարիքը, քանզի այն համարվում է ուսումնական գործունեության առավել պատասխանատու փուլ: Կրտսեր դպրոցական տարիքում առաջատար է դառնում նոր գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռք բերումը, ինտենսիվորեն զարգանում և փոխվում են ճանաչողական գործընթացները, հատկապես մտածողությունը և հաղորդակցման (հնարավորությունները, հմտությունները):

Կրտսեր դպրոցական տարիքում ձևավորվում են կայուն պահանջմունքներ ու հետաքրքրություններ, համարժեք ինքնագնահատական, զարգանում են ինքնավերահսկողության ու ինքնակարգավորման հմտություններ, իր և այլոց նկատմամբ քննադատական վերաբերմունք:

Կրտսեր դպրոցական տարիքը հանդես է գալիս որպես երեխայի հոգեկան գործընթացների զարգացման սենզիտիվ շրջան: Այս տարիքում երեխայի մոտ առավելապես զարգանում են շփումը և հաղորդակցումն: Կրտսեր դպրոցականների հաղորդակցումն չափազանց հրատապ խնդիր է, քանի որ հաղորդակցման հմտությունների և կարողությունների ձևավորման աստիճանը ազդում է ոչ միայն երեխաների կրթության արդյունավետության վրա, այլ նաև նրանց սոցիալականացման և անձի ամբողջական զարգացման վրա: Հաղորդակցումն ձևավորվում և բարելավվում է սովորողների շփման գործընթացում, ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դուրս իրականացվող գործունեության մեջ: Հաղորդակցման ազդեցությունը կրտսեր դպրոցականի ձևավորման և զարգացման գործընթացում և հաղորդակցման մակարդակը կրտսեր դպրոցականների մոտ ոչ բավարար է հետազոտված: Դրա համար անհրաժեշտություն է առաջանում

հետազոտել ոչ միայն հիմնական չափանիշները, այլ նաև հաղորդակցման դերը կրտսեր դպրոցականի անձի զարգացման գործում առկա տեսանելի մակարդակները:

Առօրյա կյանքում, տանը, աշխատավայրում,փողոցում, մենք անընդատ գտնվում ենք հաղորդակցման իրավիճակներում, որտեղ շփվում ենք ծանոթ և անծանոթ մարդկանց հետ: Հաղորդակցման յուրաքանչյուր իրավիճակ մարդուց պահանջում է որոշակի լարվածություն,որպեսզի նա պահպանի մի շարք նորմեր և կանոններ,իրականացնի հաղորդակցման նպատակը և կառավարի հարաբերությունները:

Հաղորդակցման սյուբեկտները մարդիք են:Հաղորդակցում կարող է տեղի ունենալ առնվազն երկու և ավելի մարդկանց միջև: Հաղորդակցվում են առանձին մարդիկ՝սյուբեկտները, իսկ այդ հաղորդակցության բնույթը կախված է այն բանից,թե ինչպիսի հարաբերություն գոյություն ունի նրանց միջև:[5]

Հաղորդակցումը բարդ գործընթաց է, որն ունի իր կառուցվածքը,բաղադրատարրերը,մեխանիզմները գործընթացային փուլերը և կողմերը:

Հաղորդակցման գործընթացի կառուցվածքային տարրեր են՝

- հաղորդակցության սյուբեկտները,
- հաղորդակցման միջոցները,
- հաղորդակցվողների պահանջմունքները, շարժառիթները և նպատակները,
- հաղորֆակցման ընթացքում փոխներգործության ու փոխազդեցության,ընկալման ու փոխըմբռնման մեխանիզմները,
- հաղորդակցման արդյունքները:

Ըստ Վ.Մյասիշչի՝իրականության նկատմամբ անձի հարաբերություններում գերակա է երեք ուղղություն՝ա)հարաբերություն մարդկանց նկատմամբ,բ)հարաբերություն ինքն իր նկատմամբ,գ)հարաբերություն արտաքին աշխարհի առարկաների նկատմամբ:Այս երեք ուղղություններից անձի ձևավորման գործընթացում որոշիչ է հատկապես մարդկանց նկատմամբ հարաբերությունը,որովհետև անձը մարդկանց հետ ունեցած

[5]Թունյան Զ. Ե. Երիցյան Լ. Մ. <<Կրտսեր դպրոցականի հոգեբանություն>>, Երևան 2010

փոխհարաբերություններում ոչ միայն բավարարում է իր պահանջմունքները,այլև կարգավորում է իր վարքը:[6]

Բնականաբար, հաղորդակցման ընթացքում, իր դերով և նշանակությամբ, առանձնանում է խոսքային միջոցը, որովհետև վերջինս բնորոշ է միայն մարդկանց և, բացի դրանից, հանդես է գալիս որպես ամենաուժեղ գրգռիչ: Հաղորդակցվողների պահանջմունքները,շարժառիթներն ու նպատակները հաղորդակցման գործընթացի անհրաժեշտ տարերն են :Հաղորդակցվելը մարդկանց հիմնական պահանջմունքներից է, որի իրականացումը կապված է նրանց մոտիվների, շահերի ու հետաքրքրությունների հետ: Յուրաքանչյուր հաղորդակցական գործունեություն հետապնդում է որոշակի նպատակ և կոչված է լուծելու մարդկանց հուզող խնդիրները,բավարարելու նրանց գոյաբանական, հոգևոր ու նյութական պահանջմունքները:

Հաղորդակցումն իրականացվում է մի շարք կարևոր գործառույթներ.

- Դրա միջոցով մենք բավարարում ենք մեր հաղորդակցվելու պահանջմունքը
- Մենք հաղորդակցվում ենք,որպեսզի պահենք և կատարելագործենք մեր ինքնաճանաչողությունը,
- Դրա միջոցով մենք կատարում ենք մեր սոցիալական պարտականությունները,
- Հաղորդակցման միջոցով կառուցում ենք մեր փոխհարաբերությունները,
- Դրա շնորհիվ մենք կատարում ենք տեղեկատվության փոխանակում,
- Մենք հաղորդակցվում ենք,որպեսզի ազդենք ուրիշների վրա:

Հաղորդակցությունը կարող է լինել միջանձնային և ներանձնային,ներխմբային ու միջխմբային:Միջանձնային հաղորդակցումը երկու և ավելի մարդկանց միջև տեղի ունեցող փոխհարաբերությունն է:Ներանձնային հաղորդակցումը տեղի է ունենում միևնույն անձի ներսում՝նրա տարբեր <<Ես>>-երի երկխոսության արդյունքում:

Ներխմբային հաղորդակցման դեպքում իրար հետ հաղորդակցվում են միևնույն սոցիալական,էթնիկական,մասնագիտական խմբին պատկանող մարդիկ,իսկ միխմբայինի դեպքում՝ տարբեր խմբերին պատկանող անձինք:[7]

---

[6] ԽուդոյանՍ. Ս. <<Անձիզար գացման ճգնաժամային տարիքները>>-Երևան 2004

[7] Կարապետյան Վ.Ս. Գեվորգյան Մ.Ռ. Բերբերյան Ա.Ս. Պետրոսյա Ռ.Ս. Խաչատրյան Հ.Վ. <<Կրթության հոգեբանության դասախոսությունների ժողովածու>>

Հաղորդակցության տիպերից են՝ ձևական /պաշտոնական/, ոչ ձևական, գործարար, մանիպուլյատիվ, գերծառույթային-դերային միջանձնային, հոգևոր,տոնական,սովորական և այլն: Դիտարկենք որոշ տիպեր՝զույգ հակադրությունների տեսքով.

- Գործարար ու խաղային հաղորդակցություն,
- Գործառութադերային և միջանձնային,
- Հոգևոր և օգտապաշտական'
- Ավանդական ու նորարարական
- Տոնական ու սովորական

Հաղորդակցման մոդելներն են՝գծային մոդելում, ֆիզիկական <<աղմուկ>>,ինտերակտիվ մոդելում, ճանաչողական մոդել, համոզող մոդել և այլն:

Տեղեկատվական հաղորդակցումը մանկավարժական հաղորդակցման գերակշիռ մասն է: Դրա էությունը այն է,որ հաղորդակցության մասնակիցները միմյանց ուղարկում են հաղորդումներ,փոխանակում տարբեր բնույթի տեղեկություններ,միմյանց միջև հաստատում կապեր ու հարաբերություններ,որոնք անմիջական կամ միջնորդավորված ազդեցություն են թողնում իրենց մտածելակերպի ու գործելակերպի վրա:

Ինտերակտիվ հաղորդակցումը գործընթաց է,որի ժամանակ հաղորդակցման մասնակիցների միջև հաստատվում են տարբեր բնույթի կապեր,փոխհարաբերություններ,քննարկվում և լուծվում են համատեղ հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ, և այդ ընթացքում մասնակիցներն ազդում են մեկը մյուսի գործողությունների ու վարքագծի վրա:

Պերցեպտիվ /ընկալման/ հաղորդակցման ընթացքում մարդիկ ոչ միայն շփվում,փոխգործում և փոխանակում են տեղեկություններ,այլև ուսումնասիրում,ընկալում և գնահատում են միմյանց և մեկնաբանում բացատրում միմյանց վարքագծի պատճառները:

Հազորդակցման արդյունավետության պայմաններից են մասնակիցների՝միմյանց հետ շփվելու, կապեր ստեղծելու ընդունակությունը,հաղորդակցական համատեղելիությունը հարմարվածությունը:Տարբեր իրավիճակներ թելադրում են վարքագծի որոշակի ոճեր, և տարբեր իրավիճակներում մարդիկ իրենց դրսևորում են տարբեր կերպ: Եթե մարդու ինքնադրսևորումը չի համապատասխանում իրավիճակին, այն դժվարացնում է հաղորդակցումը: Հաղորդակցության արդյունավետության ապահովման գործում կարևոր

նշանակություն ունի նաև հաղորդակցման ոճը: Հաղորդակցման ոճը մարդու վարքագծի անհատական կայուն ձև է,որը դրսևորվում է փոխգործունեության բոլոր պայմաններում՝անձնական ու գործարար հարաբերություններում, սոցիալական դերերի իրականացման ընթացքում:[8]

Ինչպես նշում է Ա.Բոդալյովը, հաղորդակցման սյուբեկտ կարող է լինել նա, ով այս կամ այն չափով գիտակցում է իր դերը հաղորդակցման մեջ, ունի մարդկանց հետ արդյունավետ հաղորդակցվելու կարողություններ ու ընդունակություններ[6, էջ 10]: Միայն ֆիզիկական ու մտավոր կարողությունները բավական չեն հաղորդակցման համար: Անհրաժեշտ է,որ երեխան ունենա հաղորդակցական պատրաստվածություն, այսինքն՝տիրապետի հաղորդակցման անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների, որ ունենա հաղորդակցական ունակություններ և կարրղանա հաղթահարել միջանձնային հաղորդակցման խոչընդոտները:

Հաճախ երեխան,նախադպրոցական տարիքում չունենալով հաղորդակցական ունակություններ, դպրոցում պարզապես չի կարողանում ինքնադրսևորվել: Այս տեսանկյունից հաղորդակցական ակտիվության խթանման գործընթացում կարևոր նշանակություն ունի հաղորդակցական խոչընդոտների հաղթահարումը: Մանկավարժական հաղորդակցման մեջ արգելակման հիմնական պատճառն ինքնավստահության պակասն է, որը հաղորդակցման կարողություններին ու հմտություններին ոչ բավարար տիրապետման հետևանք է: Արգելակման հաջորդ հիմնական պատճառներից է գնահատականի՝ թվանշանի գործոնը: Տեղին է նշել, որ հաճախ գնահատականը անդրադառնում է նաև երեխայի ներընտանենական միջանձնային փոխհարաբերությունների վրա:[9]

Մնացած խոչընդոտները պայմանավորված են հաղորդակիցների՝մանկավարժի և համադասարանցիների հետ ունեցած փոխհարաբերություններով,թե որքանով են բավարարվում երեխայի հետաքրքրությունները,զարգանում է հաղորդակցման պահանջմունքները:Այստեղ կարևոր նշանակություն ունենմանկավարժի հաղորդակցական պատրաստվածությունն ու գործիմացությունը:

---

[8]ԽուդոյանՍ. Ս. <<Անձիզար գացման ճգնաժամային տարիքները>>-Երևան 2004

[9] Կարապետյան Վ.Ս. Գեվորգյան Մ.Ռ. Բերբերյան Ա.Ս. Պետրոսյա Ռ.Ս. Խաչատրյան Հ.Վ. <<Կրթության հոգեբանության դասախոսությունների ժողովածու>>

Հաղորդակցումը պետք է կապված լինի երեխաների հետաքրքրությունների, հակումների, հնարավորությունների հետ: Միայն երեխայի հետաքրքրություններին համապատասխան և հույզերի հետ կապված ուսումնադաստիրակչական գործընթացը կարող է հաղթահարել երեխայի ձանձրույթը և ապահովել սյուբեկտայնության հավասար մակարդակներ բոլորի համար:

Այսպիսով,հաղորդակցական ակտիվության խթանումը պայմանավորված է միջանձնային խոչընդոտների հաղթահարմամբ,երեխայի հաղորդակցական ունակությունների ձևավորմամբ ու դրսևորմամբ:

Ինչպես նշում է Ռ.Կետելը,կարողությունները կամ ունակությունները կատարելագործում են անձի կառուցվածքի մեջ մտնող որակները:

Հաղորդակցական ունակությունները նպաստում են հաղորդակցական ակտիվության դրսևորմանը նհաղորդակցական որակի կատարելագործմանը: Այդպես երեխաննան գիտակցում է իր դերը հաղորդակցման մեջ: Ձևավորվում է հաղորդակցունակ անձ, որը տիրապետում է հաղորդակցական սկզբնական ակտիվության:

Ակտիվությունն ընդհանրապես դիտարկվում է որպես անձնային որակ, որը դրսևորվում է գործունեության նկատմամբ հարաբերության՝ պատրաստության, ինքնուրույնության ձգտման, դրա իրականացման որակի, նպատակին հասնելու արդյունավետ ուղիների ընտրման մեջ, խոսքային ակտիվությամբ, իսկ հաղորդակցական ակտիվության աղբյուրը՝ հաղորդակցման պահանջմունքի մեջ:

Համաձայն Ա. Մասլոուի մշակած պահանջմունքների աստիճանակարգի, եթե չի ձևավորվում հաղորդակցման պահանջմունքը, եթե ճնշվում է ինքնադրսևորումը, և անձը չի կարողանում ինքնաբացահայտվել, ինքնահիրացվելհաղորդակցման մեջ, ապա կարող է արգելակվելանձի զարգացումը: Հաղորդակցական ակտիվությաունը կապված է հաղորդակցման պահանջմունքի բավարարման հետ, և հաղորդակցական ակտիվության զարգացումը նպաստում է նաև հաղորդակցման պահանջմունքի փոխակերպման: Այսինքն՝ հաղորդակցական ակտիվությունը դառնում է ներքին հոգեվիճակ,գործունեության դրդապատճառ և անձնային որակ:[10]

[10] Թունյան Զ. Ե. Երիցյան Լ. Մ. <<Կրտսեր դպրոցականի հոգեբանություն>>, Երևան 2010

Հասակակիցների հետ հաղորդակցումը երեխաներին տալիս է այն,ինչ սկզբունքորեն չի կարող տալ մեծահասակների հետ ասիմետրիկ հաղորդակցությունը:

Եզրակացություն

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքում ստացված տվյալների հիման վրա եկանք հետևյալ եզրակացությունների՝

- Կրտսեր դպրոցական տարիքը համարվում է ուսումնական գործունեության առավել պատասխանատու փուլ: Այս տարիքում առաջատար է դառնում նոր գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռք բերումը, ինտենսիվորեն զարգանում և որակապես փոխվում են ճանաչողական գործընթացները՝ ձեռք բերելով միջնորդավորված և կամածին բնույթ:
- Կրտսեր դպրոցական տարիքը ստեղծում է մեծ հնարավորություններ անձի բարոյական որակների և դրական գծերի ձևավորման համար:
- Հաղորդակցումը մարդու փոխներգործելու կարողությունն է այլ մարդկանց հետ:
- Կրտսեր դպրոցական տարիքում ձևավորվող և զարգացող հաղորդակցական ունակությունների վերաբերյալ առկա տեսական և գործնական մոտեցումների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ հաղորդակցական ունակությունների ձևավորման աստիճանը ազդում է ոչ միայն երեխաների կրթության արդյունավետության վրա, այլ նաև նրանց սոցիալականացման և անձի ամբողջական զարգացման վրա:
- Հաղորդակցումը ինքնին հանդիսանում է աշակերտների բազային հատկանիշներից մեկը, որը մի կողմից ապահովում է ուսման մեջ հաղորդակցման գործընթացի արդյունավետ ընթացքը, իսկ մյուս կողմից՝ ձևավորվում և հղկվում է արդյունավետ ուսումնական գործընթացի ընթացքում:
- Հաղորդակցական գործընթացի զարգացման առավել արդյունավետ շրջան է համարվում դպրոցական տարիքը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ալեքսանյան Ա. Ս. «Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում» Երևան 2015
2. Ասատրյան Զ. <<Տարրական կրթություն մանկավարժություն>>, 2009
3. Թունյան Զ. Ե. Երիցյան Լ. Մ. <<Կրտսեր դպրոցականի հոգեբանություն>>, Երևան 2010
4. ԽուդոյանՍ. Ս. <<Անձիզար գացման ճգնաժամային տարիքները>>-Երևան 2004
5. Կարապետյան Վ.Ս. Գեվորգյան Մ.Ռ. Բերբերյան Ա.Ս. Պետրոսյա Ռ.Ս. Խաչատրյան Հ.Վ. <<Կրթության հոգեբանության դասախոսությունների ժողովածու>>